

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՊԱՐՍԱՄՅԱՆ ՎԱՐԴԱՆ ՈԱԶՄԻԿԻ**

**ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՈՐԱԿՑԱԼ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

**ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն»  
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**Երևան - 2017**

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

**Գիտական ղեկավար՝**

Մանկավարժական գիտությունների դոկտոր՝ **Մ. Ա. Մկրտչյան**

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝**

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Մ. Մ. Մանուկյան**

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Ս. Բ. Սիսյան**

**Առաջատար կազմակերպություն՝**

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017 թ. Մայիսի 31-ին ժամը 12-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՅ-ի “Մանկավարժություն” 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թ. Ապրիլի 30-ին

Մասնագիտական 020 խորհրդի գիտ. քարտուղար, մանկավարժական

գիտությունների թեկնածու, դոցենտ՝



Ա.Ր. Սվաջյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Հետազոտության արդիականությունը:** Կրթության որակի հիմնախնդիրը գոյություն ունի շատ վաղուց, սակայն նրա դերը առավել կարևորվել է ժամանակակից աշխարհում, և այսօր կրթության որակի բարձրացման խնդիրը դարձել է կրթության փիլիսոփայության հանգուցային գաղափարը: Կրթության որակի և ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման պահանջը հատկապես կարևորվում է հասարակության զարգացման, նոր կենսապայմաններին կրթական համակարգի արագ հարմարվելու անկարողության պատճառով: Դա է պատճառը, որ տեղի են ունենում այդ ոլորտի գրեթե անընդհատ և շարունակական բարեփոխումներ: Ընդ որում՝ բարեփոխումներ տեղի են ունենում ոչ միայն Հայաստանի Հանրապետության կամ Նախկին ԽՍՀՄ երկրների, այլև աշխարհի գրեթե բոլոր երկրների հանրակրթության բնագավառում: Դրանք ունեն մի շարք դրդապատճառներ, որոնցից մի քանիսը բխում են **ուսուցման որակին** վերաբերող հիմնահարցերից: Սակայն այսօր հստակ և միանշանակ սահմանված չեն **կրթության որակ և ուսուցման որակ** հասկացությունները:

Այսօրվա տեղեկատվական կոչվող դարաշրջանում մեծ արագությամբ ավելանում է մարդկանց գործունեության համար անհրաժեշտ տեղեկությունները, որոնք մտապահելն ուղղակի անհնար է: Ուստի սովորողները յուրացման ենթակա նյութի ծավալների աճին զուգահեռ հաճախ ոչ թե հասկանալով յուրացնում, այլ պարզապես մտապահում են յուրացման համար նախատեսված նյութերը, այն էլ շատ կարճ ժամանակով, միայն տվյալ օրվա դասահարցմանը պատրաստ լինելու համար: Բացի այդ, սովորողների հաղորդակցական կարողությունների ձևավորումն ու մտածողության ընդհանուր ձևերի տիրապետումը տեղի է ունենում տարբերայնորեն և ոչ թե ուսումնական գործընթացում հատուկ և արհեստական կազմակերպված լինելու շնորհիվ: Իսկ հաղորդակցական կարողությունների ցածր մակարդակն իր հերթին ուղղակիորեն ազդում է դասավանդվող նյութի ընկալման և յուրացման որակի վրա: Մեր կարծիքով, որպես առաջնահերթ խնդիր պետք է դրվի յուրաքանչյուր սովորողի կողմից ուսումնասիրվող նյութը հասկանալու մակարդակով յուրացնելու պարտադիր նվազագույն պահանջը: Իհարկե այստեղ իրենց դերն ունեն բազմաթիվ գործոններ, որոնցից են ուսուցչի վարպետությունը ուսումնասիրողակտիկ նյութերի որակն ու համապատասխանությունը սովորողների տարիքային խմբին, ուսուցման պայմաններն ու տեխնիկական հագեցվածությունը, մանկավարժական տեխնոլոգիաները և այլն: Սակայն դեռ ուսումնասիրված չէ այդ գործոններից յուրաքանչյուրի ազդեցության չափն ու դերը ուսուցման որակի և արդյունավետության վրա:

**Հետազոտության նպատակն է** «Հասկացման բերող քարտերի մեթոդիկայի» և «Ընկալի մեթոդիկայի» օրինակով բացահայտել և հիմնավորել ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի որակյալ ուսուցման ապահովման տեսանկյունից կիրառելի արդյունավետ տեխնոլոգիական գործոնների վճռորոշությունը:

**Հետազոտության օբյեկտը** հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսուցման որակի վրա ազդող գործոններն են:

**Հետազոտության առարկան** հանրակրթական հաստատություններում որակյալ ուսուցման գործընթացի վրա ազդող տեխնոլոգիական գործոններն են:

**Թեմայի մշակվածության աստիճանը:** Փիլիսոփայական գրականության մեջ հասկացման թեմային անդրադարձել և այն որպես լեզվական հաղորդակցության հիմնախնդիր առանձնացրել են Է. Բետտին, Գ. Գադեմերը, Ա. Հայդեգգերը, Գ. Հեգելը, Ֆ. Շլեյերմախերը, Գ. Շչեդրովիցկին, Կ. Պոպերը, Գ. Ռուզանովը և այլք:

Հոգեբանության ոլորտում մտազործունեության ներքին մեխանիզմների տեսանկյունից հասկացման հիմնախնդրին ուսումնասիրությամբ զբաղվել են Ս. Բոնդարենկոն, Ա. Բրուդին, Պ. Գալպերին, Գ. Գրանիկը, Լ. Դոբլանը, Պ. Չինչենկոն, Ն. Ժինկինը, Ա. Լեոնտևը, Լ. Վիգոտսկին և այլք:

Լեզվաբանության ոլորտում, տեքստի շուրջ աշխատանքի ձևերի որպես հասկանալու հմտությունները զարգացնող միջոցների խնդրին ուսումնասիրել են Մ. Բախտինը, Գ. Բոգինը, Ն. Բոնցկին, Յու. Լոտմանը և ուրիշներ:

Դիդակտիկայում մանկավարժական տեխնոլոգիաների և մեթոդիկաների վերաբերյալ ուսումնասիրություններ են կատարել Բ. Բլյումը, Վ. Գուգենը, Օ. Դոլժենկոն, Ի. Լեբները, Վ. Կրուպիչը, Մ. Մինովան, Մ. Մկրտչյանը, Ե. Չենչենկոն, Վ. Սիմոնովը, Յու. Տրոիցկին և այլք:

Գեղարվեստական տեքստերը սովորեցնելուն են նվիրված Ե. Անտոնովի, Տ. Ավլովի, Տ. Գրանիկի, Ա. Կուսուզովի, Ն. Սվետլովսկայայի, իսկ ուսումնական տեղեկատվությունը հասկանալու հիմնախնդրին՝ Մ. Բերշտրոսկու, Ռ. Գուրինի, Տ. Կոլոդչկոյի, Վ. Շտեյնբերգի, Ա. Օստապենկոյի, ուսումնասիրությունները:

**Հետազոտության գիտական վարկածը.** յուրաքանչյուր սովորողի կողմից ուսումնասիրվող նյութը հասկանալու մակարդակով յուրացումն ապահովելու գործում վճռորոշ գործոնը տեխնոլոգիական գործոնն է, հետևաբար հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսուցման որակն էապես կբարելավվի, եթե ուսումնական գործընթացում կիրառվեն այնպիսի ուսումնական տեխնոլոգիաներ, որոնք կարող են ապահովել յուրաքանչյուր սովորողի կողմից ուսումնասիրվող նյութի յուրացումն առնվազն հասկանալու մակարդակով: Նման տեխնոլոգիաների նուշօրինակ կարող են ծառայել «Հասկացման բերող քարտերի մեթոդիկան» և «Բիվինի մեթոդիկան»:

**Հետազոտության նպատակին, օբյեկտին, առարկային և վարկածին համապատասխան ձևակերպվել են հետազոտության հետևյալ խնդիրները.**

1. Հետազոտության թեմայի վերաբերյալ մանկավարժագիտական գրականության ուսումնասիրություն:
2. Ուսումնասիրության և փորձարկումների միջոցով վեր հանել մանկավարժական տեխնոլոգիաների ու տեխնոլոգիական գործոնների ազդեցությունը դասավանդվող նյութի յուրացման որակի վրա:
3. Յուրաքանչյուր սովորողի որակյալ յուրացումն ապահովելու տեսանկյունից վերլուծել և հիմնավորել «Հասկացման բերող քարտերի մեթոդիկայի» և «Բիվինի մեթոդիկայի» դերը:

**Հետազոտության տեսական-մեթոդաբանական** հիմք են հանդիսացել:

- մանկավարժական փոխուփոխության իմացաբանական և լեզվական հաղորդակցության տեսությունները (Է. Բետտի, Գ. Գադեմեր, Ա. Հայդեգեր, Գ. Հեգել, Ֆ. Շելերմախեր, Գ. Շչեդրովիցկի, Կ. Պոպեր, Գ. Ռուզանով և այլք),
- մտագործունեության ներքին մեխանիզմների վերաբերյալ վերլուծությունները (Ս. Բոնդարենկո, Ա. Բրուդնի, Գ. Գրանիկ, Լ. Դոբլան, Պ. Չինչենկո, Ն. Ժինկին, Ա. Լեոնտև, Մ. Մկրտչյան, Լ. Վիգոտսկի և այլք),
- ուսուցման ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների, մեթոդների, ձևերի վերաբերյալ ժամանակակից տեսությունները (Բ. Բյուլմ, Վ. Գուզեն, Վ. Դյաչենկո, Օ. Դոլժենկո, Ի. Լերներ, Վ. Կրուպիչ, Մ. Մինովա, Մ. Մկրտչյան, Վ. Սիմոնով և Ե. Չեռնենկո, Գ. Սելևկո, Յու. Տրոիցկի և այլք),

**Առաջադրված խնդիրների լուծման համար օգտագործվել են հետազոտության հետևյալ մեթոդները.**

- տեսական մեթոդներ՝ հոգեբանամանկավարժական, մասնագիտական և մեթոդական գրականության վերլուծություն և ընդհանրացում,
- Էմպիրիկ մեթոդներ՝ դիտում, անկետավորում, թեստավորում, զրույց, հարցազրույց, գործունեական արդյունքների գնահատում,
- վիճակագրական մեթոդներ՝ փորձարարական հետազոտության ընթացքում ստացված տվյալների մաթեմատիկական մշակում, արդյունքների տրամագրային պատկերում:

**Հետազոտության բազա** են հանդիսացել «Բյուրական» կրթահամալիրում, Արտակարգ իրավիճակների կառավարման պետական ակադեմիայում, ուսուցիչների վերապատրաստման բազմաթիվ դասընթացների ժամանակ ինչպես հեղինակի, այնպես էլ այլ մանկավարժների փորձի վերլուծությունը:

**Գիտահետազոտական աշխատանքն իրականացվել է չորս փուլով:**

**Առաջին փուլ** (2005-2009 թթ.)՝ ուսումնական գործնական դաշտում հետազոտությունների, ուսումնասիրությունների իրականացում և խնդիրների բացահայտում:

**Երկրորդ փուլ** (2009-2011 թթ.)՝ բացահայտված խնդիրներից ուսումնասիրվող խնդրի առանձնացում, խնդրի դրվածքի հիմնավորում:

**Երրորդ փուլ** (2011-2013 թթ.)՝ ձևակերպված խնդրի հետ կապված հիմնախնդիրների, դժվարությունների ուսումնասիրություն, ընտրված մոտեցումների փորձարկումներ:

**Չորրորդ փուլ** (2013-2015 թթ.)՝ ուսումնասիրությունների և փորձարկումների արդյունքների ընդհանրացում և ամփոփում, ստացված արդյունքների ու եզրակացությունների ձևակերպում:

**Հետազոտության գիտական նորույթ:**

- Սահմանվել է «դրակյալ ուսուցում» հասկացությունը, ճշգրտվել և հստակեցվել են «հասկացում», «ուսուցման տեխնոլոգիա», «ուսուցման մեթոդիկա» հասկացությունները:
- Փոփոխական կազմով հաղորդակցության ձևի վրա հիմնված «Հասկացման բերող քարտերի մեթոդիկայի» և «Րիվինի մեթոդիկայի» օրինակով հիմնավորվել է տեխնոլոգիական գործոնի վճռորոշությունը որակյալ ուսումնական գործընթացում՝ մասնավորապես ուսումնասիրվող նյութի՝ հասկացման մակարդակով յուրացման գործում:

### **Հետազոտության տեսական նշանակությունը:**

Ուսումնասիրությունների և փորձարկումների արդյունքում՝

- ճշգրտվել և հստակեցվել են «որակյալ ուսուցում», «ուսումնական տեխնոլոգիա», «ուսուցման մեթոդիկա» հասկացությունների իմաստն ու նշանակությունը,
- վերլուծվել են հասկանալու մակարդակով յուրացումն ապահովող երկու ուսումնական տեխնոլոգիաներ և հիմնավորվել են այն մեխանիզմներն ու գործոնները, որոնք և ապահովում են հասկացման գործընթացը:
- Ներկայացված վերլուծություններն ու հիմնավորումները կարող են տեսական հետաքրքրություն ներկայացնել այդ թեմայով հետաքրքրվող մասնագետների համար:

### **Հետազոտության գործնական նշանակությունը:**

- «Հասկացման բերող քարտերի մեթոդիկայի» և «Րիվիևի մեթոդիկայի» վերլուծությունը հնարավորություն կտա դրանք ավելի նպատակաուղղված օգտագործելու ուսումնական գործընթացում:
- Դրանք կարող է օգտագործվել ոչ միայն հանրակրթական դպրոցներում, այլ նաև նախնական արհեստագործական, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում և բուհերում դասավանդող մանկավարժների կողմից՝ արդյունավետ և սովորողների անհատական առանձնահատկությունները հաշվի առնելուն նպաստող ուսումնական գործընթաց կազմակերպելու համար:

### **Պաշտպանության և ներկայացվում հետևյալ դրույթները՝**

1. Գոյություն ունեցող յուրացման որակի դասակարգման տարբեր մոտեցումների հիման վրա ընդհանրացված այն պնդումը, որ յուրացման որակի բարձր մակարդակների հասնելու համար անհրաժեշտ է, որ կյուբի առնվազն հասկացման մակարդակով յուրացումը հանրակրթական համակարգում համարվի նվազագույն պահանջ:
2. Այն գիտական հիմնավորումը, որ գործող կրթական համակարգում տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով սովորողների գերակշիռ մասը ուսումնասիրվող կյուբը ոչ թե հասկանում և յուրացնում է, այլ, լավագույն դեպքում, պարզապես մտապահում: Դա հետևանք է գերազանցապես դաս-դասարանային համակարգին բնորոշ պարապմունքների համար նախատեսված ուսումնական տեխնոլոգիաների կիրառման: Դրանից խուսափելու համար առաջարկում ենք, որ ուսուցման որակի բարձրացմանն ուղղված բարեփոխումները նախ և առաջ ուղղված լինեն ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման ծավալի մեծացմանը:
3. Յուրաքանչյուր աշակերտի կողմից առնվազն հասկանալու մակարդակով ուսումնասիրվող կյուբի արդյունավետ յուրացումը ապահովելու համար առաջարկվող փոփոխական կազմով զույգերով հաղորդակցման ձևի վրա հիմնված ուսումնական տեխնոլոգիաները (կոլեկտիվ ուսումնական տեխնոլոգիաներ, մասնավորաբար «Հասկացման բերող քարտերի մեթոդիկան» և «Րիվիևի մեթոդիկան»):
4. Այն հիմնավորումը, որ հասկացման մակարդակով կյուբի յուրացման համար անհրաժեշտ է, որ մանկավարժական տեխնոլոգիաները հնարավորություն ընձեռեն, որպեսզի ուսումնական գործընթացում տեղի ունենա՝

- երկխոսություն,
- ինքնաանդրադարձ վերլուծություն,
- հասկացման մակարդակների (հերմենեվտիկ շրջանների) հաջորդականություն,
- տեքստի ինքնուրույն մեկնաբանություն:

**Ջետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը** ապահովված է մանկավարժական փորձարարության արդյունքներով ու եզրակացություններով, ուսուցման տեխնոլոգիաների վերաբերյալ ժամանակակից տեսությունների համալիր ուսումնասիրությամբ, ինչպես նաև հեղինակի գիտական ներդրմամբ:

**Ջետազոտության փորձաքննությունը:** Ատենախոսությունը քննարկվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մանկավարժության տեսության և պատմության և մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոններում: Ատենախոսության կրթությունը ներկայացվել են միջազգային և հանրապետական գիտաժողովներում, ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովում կողմից հավատարմագրված գիտական հանդեսներում հրատարակված հոդվածներում:

**Ատենախոսությունը կառուցվածքը:**

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, որոնք ներկայացնում են ատենախոսության հիմնական բովանդակությունը, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսական աշխատանքում օգտագործվել են 121 աղբյուր: Ատենախոսության ծավալը կազմում է համակարգչային 145 էջ, այն ներառում է 2 գծանկար, 6 աղյուսակ, 8 գծապատկեր:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԱԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորվել է հետազոտության արդիականությունը, սահմանվել են նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, գիտական վարկածը, մեթոդաբանական հիմքերը, մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «**Որակյալ ուսուցում**» **հասկացությունը և դրա իրականացման հիմնահարցերը**», բաղկացած է երեք ենթագլուխներից: Առաջին՝ «**Որակյալ ուսուցում**» և «**հասկացում**» հասկացությունների էությունը» ենթագլխում վերլուծված են «**որակյալ ուսուցում**» և «**հասկացում**» հասկացությունները: Ներկայացված է, որ մանկավարժական գրականության մեջ սահմանված չէ «որակյալ ուսուցում» հասկացությունը, և փորձ է արված այն ածանցել «որակյալ կրթություն» հասկացությունից:

Նաև փորձ է արվել սահմանել և բնութագրել «որակյալ ուսուցում» հասկացությունը, իր բաղադրիչների՝ «ուսուցում» և «որակ» հասկացությունների միջոցով:

Վերլուծելով մանկավարժական գրականության մեջ եղած մոտեցումներն ու վեր հանելով դրանց էական կողմերը՝ եզրակացվել է, որ ուսուցումը կարելի է համարել որակյալ երբ՝

- դասավանդվում են անհրաժեշտ և չափորոշչային պահանջին համապատասխան գիտելիքներ,
- այդ գիտելիքները յուրացվում են առնվազն **հասկացման** մակարդակով,
- դրանք յուրացնում է յուրաքանչյուր սովորող,
- ուսումնական գործընթացում յուրաքանչյուր սովորող իր հնարավորությունների շրջանակում կարողանում է դրսևորել բարձր արդյունավետություն:

Այնուհետև սահմանվել է «որակյալ ուսուցում» հասկացությունը:

**Որակյալ ուսուցումը անհրաժեշտ գիտելիքներ պարունակող ուսումնական նյութի՝ առնվազն հասկանալու մակարդակով յուրացումն է յուրաքանչյուր սովորողի կողմից այնպիսի ուսումնական գործընթացում, որտեղ յուրաքանչյուր սովորող իր հնարավորությունների շրջանակում կարողանում է դրսևորել գործունեության բարձր արդյունավետություն:**

«Հասկացում» հասկացության վերաբերյալ մանկավարժական գրականության մեջ չափազանց շատ ուսումնասիրություններ կան: Հասկացումը յուրացման ակտի (ընկալում – հասկացում – իմաստավորում – ամրապնդում – կիրառում) կարևոր բաղադրիչներից մեկն է:

**Վերլուծվել է, որ տարբեր սահմանումներում հասկացման էությանը սովորում է տարբեր բացատրություններ: Այն ներկայացվում է որպես՝**

- ներքին իմաստի բացահայտում,
- ինքնաանդրադարձ վերլուծության արտաբերում,
- առարկաների միջև էական կապերի կամ առնչությունների բացահայտում,
- տարրերի իմաստը գտնելը, իմաստ տալը կամ վերագրելը:

Դա այդպես է, քանի որ իրարից տարբերվում են **հասկանալու օբյեկտները**, այսինքն, տարբեր իրադրություններում սուբյեկտները ստիպված են լինում՝

- հասկանալ երևույթը,
- հասկանալ գործընթացը,
- հասկանալ օրենքները,
- հասկանալ սարքավորումները, մեքենաները, համակարգերը,
- հասկանալ հասկացությունը,
- հասկանալ հաղորդակցական իրադրությունը և այլն:

«Հասկացում» հասկացությանն ուսումնասիրել են փիլիսոփաները, հոգեբանները, լեզվաբանները և մանկավարժները: Հաշվի առնելով այդ ուսումնասիրությունների արդյունքները, նշվում է, որ այս ատենախոսության մեջ «Հասկացում» հասկացության բացատրությունը հետաքրքրություն է

ներկայացնում նախ և առաջ դիդակտիկական տեսանկյունից: Մանկավարժության մեջ «հասկացումը» քննարկվում է՝

- որպես տեքստի իմաստի ընկալում, վերականգնում և կառուցում,
- որպես իրադրության իմաստի բացահայտում,
- որպես սոցիալական գործողության, վարքի բացատրման գործընթաց: «Հասկացումը» կարող է օգտագործվել տարբեր իմաստներով.
- նոր բովանդակության յուրացման հետ կապված՝ մտածելու ունիվերսալ գործողություն,
- նորի՝ անհայտի և արդեն հայտնիի միջև կապերի հաստատման, ինչ-որ բանի մասին ճիշտ պատկերացում կազմելու գործընթաց,
- արտաբերված ինքնասանդրադարձ վերլուծություն,
- կարողություն, որն աշակերտը ձեռք է բերում հասկացմանն ուղղված գործունեություն իրականացնելիս,
- հասկացմանն ուղղված գործունեություն իրականացնելու արդյունք,
- սոցիալական իրադրությանը համապատասխող անհատի վարքագծի պայման,
- երեխաների ուսումնառության հաջողության պայման:


Հասկացման գործընթացին նպաստող պայմանների ուսումնասիրության հիման վրա եզրակացվել է, որ հասկացման մակարդակով նյութի յուրացման համար անհրաժեշտ է, որ մանկավարժական տեխնոլոգիաները հնարավորություն ընձեռեն, որպեսզի ուսումնական գործընթացում տեղի ունենա սովորողների միջև երկխոսություն, յուրաքանչյուր սովորող ժամանակ և հնարավորություն ունենա ինքնասանդրադարձ վերլուծության ու տեքստի ինքնուրույն մեկնաբանում:

Մասնագիտական գրականության ուսումնասիրության հիման վրա ներկայացված են հասկացման բնութագրիչներ՝ **խորությունը, հստակությունը, ամբողջականությունը և հիմնավորվածությունը:**

Սրանց ուսումնասիրությունը պետք է այն բանի համար, որ նախ հասկացվի. թե ինչ մակարդակով է սովորողը հասկացել ուսումնասիրվող նյութը, ապա մշակվեն այն չափանիշներն ու ցուցանիշները, որոնցով պետք է պարզել ու գնահատել սովորողի հասկացման մակարդակը:

Երկրորդ՝ «Որակյալ ուսուցման իրականացման հիմնահարցերը» ենթագլխում ներկայացված է, ուսուցման կազմակերպման սկզբունքային գծանկարը:

## Ուսուցման կազմակերպումը



Գծանկար 1


Գծանկարի մեկնաբանությամբ ցույց է տրված, որ ի թիվս այլ շատ գործոնների ուսուցման որակը կախված է առնվազն.

- կրթության նպատակներից և բովանդակությունից,
- ուսուցման գործընթացի սուբյեկտներից,
- ուսումնադաստիարակչական գործընթացից (ուսուցման կազմակերպման ձևեր, մեթոդներ, տեխնոլոգիաներ),
- ուսումնական գործընթացի և արդյունքի գնահատումից: Այնուհետև առանձին-առանձին դրանք վերլուծված են:

Ներկայացված է, թե որ օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերն են ազդում հանրակրթության նպատակների ու բովանդակության ձևավորման վրա, ինչ բաղադրիչներից են դրանք կազմված: Մանրամասն վերլուծված են ներկայիս հանրակրթական համակարգի նպատակների ու բովանդակության մեջ առկա և՛ դրական, և՛ թերի դևոտրումները, ինչպես նաև չափորոշչային պահանջի և դրա իրականացման միջև անհամապատասխանություններն ու հակասությունները: Որպես հիմնական հակասություն է ներկայացված սովորողների կողմից ուսուցանվող նյութի յուրացման անհատական բնույթի և ուսուցումը ընդհանուր ճակատով կազմակերպելու հետևանքով առաջացող հակասությունը:

Նույն ենթագլխում մեկ այլ գծանկարով ներկայացված է ընդհանուր ճակատի իրողությունը.

Ընդհանուր ճակատի առկայությունը



Գծանկար 2

Վերլուծված և ցույց է տրված, որ ընդհանուր ճակատի առկայությամբ ցանկացած ուսումնական պարապմունքի ժամանակ ստիպված ենք ականատես լինել իրարից շատ քիչ տարբերվող միևնույն հետևանքին: Սովորողների մի մասը հարկադրաբար աշխատում է իր հնարավորություններից ցածր արդյունավետությամբ, այսինքն՝ պատրաստ է անցնել ուսումնական հաջորդ կյուբի ուսումնասիրությանը, սակայն ստիպված է մյուսների պատճառով սպասել: Այս սովորողները պատկերված են առաջին հորիզոնականում: Սովորողների մի մասին ժամանակը չի բավարարում ծրագրված արդյունքին հասնելու համար, ուստի նրանք ստիպված են աշխատանքը թերի թողնել ու անցնել հաջորդ թեմայի ուսումնասիրությանը: Այս աշակերտները պատկերված են երրորդ հորիզոնականում: Եվ միայն երկրորդ հորիզոնականում պատկերված սովորողների ընթացքն է համապատասխանում ընդհանուր խմբի համար ընտրված ընթացքին: Այսինքն՝ ուսումնական խմբի մի որոշ մասի համար ուսումնական գործընթացն արդյունավետ է, երկրորդ մասի համար անարդյունավետ է, որովհետև ստիպված են աշխատել իրենց հնարավորություններից ցածր արդյունավետությամբ, իսկ երրորդ մասին անարդյունավետ է, որովհետև ամեն անգամ ստիպված է աշխատանքն ընդհատել և կյուբը ոչ լիակատար յուրացրած անցնել հաջորդ թեմային: Դրա հետևանքով ինչ-որ ժամանակ անց սովորողի չյուրացրածը, աստիճանաբար

կուտակվելով, հասնում է մի այնպիսի աստիճանի, որը անհնար է դարձնում նրա հետագա որակյալ ուսուցումը:

Վերլուծության արդյունքում եզրակացվում է, որ դաս-դասարանային համակարգը կամ ավանդական դպրոցը կարծես կողմնորոշված է դեպի միջին ընդունակություններով և կարողություններով աշակերտները:

Այս ենթազխում ներկայացված է նաև գործող գնահատման կարգին համապատասխանող գնահատման ձևերն ու գնահատման համակարգի նպատակները: Ցույց է տրված, որ էթե գնահատման համակարգը իրականում կարողանար կամ պարտադրեր լուծել սահմանված խնդիրները, ապա դժվար թե որևէ մեկը դժգոհեր ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններից: Սակայն այդ խնդիրները գործնականում մնում են չլուծված:

Երրորդ՝ **«Տեխնոլոգիական գործոնի վճռորոշ դերը որակյալ ուսուցման գործընթացում»** ենթազխում ներկայացված են «մանկավարժական տեխնոլոգիա» հասկացության վերաբերյալ ուսումնասիրողների կարծիքները, որոնց վերլուծության արդյունքում հանգում ենք հետևյալ եզրակացությանը. «մանկավարժական տեխնոլոգիա» պետք է համարվեն ուսուցման գործընթացում կիրառվող գործունեության այն մոդելները, որոնք՝

- կախված չեն կոնկրետ բովանդակությունից,
- ունեն համապատասխան գործիքակազմ,
- կախված չեն ուսուցչի տաղանդից,
- ապահովում են երաշխավորված բարձր արդյունք,
- վերարտադրելի են:

Հիմնավորվում է տեխնոլոգիաների վճռորոշության հարցը, որը կենտրոնական տեղ է զբաղեցնում որակյալ ուսուցման գործընթացում:

Այս ենթազխում ցույց են տրվել, թե ուսումնասիրողների որ կարծիքներին ու մոտեցումներին են նախապատվելի և դուրս են բերվել այն բոլոր հատկանիշները, որոնք պետք է ունենա հասկացումն ապահովող մանկավարժական տեխնոլոգիան:

Երկրորդ գլուխը՝ **«Որակյալ կրթության իրականացման ուղիները»**, բաղկացած է երկու ենթազխից:

Առաջին՝ «Հասկացումն ապահովող տեխնոլոգիական առանձնահատկությունները «Հասկացման բերող քարտերի մեթոդիկայում» ենթազխում ներկայացվել են հասկացման բերող քարտերի կառուցվածքն ու հարցերի տեսակները, «Հասկացման բերող քարտերի մեթոդիկայի» ալգորիթմը:

Հասկացման բերող քարտը կազմված է հասկացման ենթակա պարբերությունից և 3 կամ 4 խումբ հարցերից:

Առաջին խմբի հարցերը նպատակաուղղված են նախկինում յուրացված այն նյութերի վերհիշմանը, որոնք անհրաժեշտ են տվյալ պարբերությունը հասկանալու համար: Բացի այդ, այս խմբի հարցերը ընդգծում և սահմանազատում են այն բնագավառը, որին վերաբերում է ուսումնասիրվող նյութը:

Երկրորդ խումբ հարցերը շեշտում և աշակերտի ուշադրությունը հրավիրում են առանձին բառերի և բառակապակցությունների վրա: Դրանց

պատասխանները օգնում են աշակերտին, որ նա կարողանա պատասխանել ուսումնասիրվող նյութի բովանդակությանը վերաբերվող հարցերին:

Երրորդ խմբի հարցերը վերաբերում են ուսումնասիրվող նյութի հիմնական իմաստին: Դրանց հերթականությամբ պատասխանելով՝ ի վերջո աշակերտը պատասխանում է ուսուցանվող նյութից բխող գլխավոր հարցին, հետևաբար ստացվում է, որ հասկանում է այդ նյութի իմաստը:

Հասկացման քարտի միջոցով սովորողի գիտակցությունում արդեն առկա գիտելիքները հատուկ ձևով վերակառուցվում և դառնում են նոր իմաստ կրող ինչ-որ մի ամբողջություն: Այդ իմաստի ստեղծման գործընթացն էլ հենց հասկացման գործընթացն է:

Երկրորդ՝ «Հասկացումն ապահովող տեխնոլոգիական առանձնահատկությունները «Բիվինի» մեթոդիկայում» ենթագլխում, եզրակացված է, որ այս տեխնոլոգիայով աշխատելիս հասկացումն ապահովող հիմնական տեխնոլոգիական միջոցը պարբերության մշակման ձևն է: Ներկայացված է պարբերությունների մշակման ձևը, գործողությունների այն հերթականությամբ, որը մեջբերված է Մանուկ Մկրտչյանի «Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական տեսական և գործնական հարցերը» աշխատությունից.

- ա) տեքստի ընթերցում,
- բ) որոշ բառերի իմաստի պարզաբանում,
- գ) որոշ բառերի հասկացման սահմանների ճշգրտում,
- դ) որոշ նախադասությունների (կամ այդ նախադասությունների մասերի) իմաստի ըմբռնում,
- ե) պարբերության գլխավոր իմաստի որոշում,
- զ) փաստարկների և եզրահանգումների առանձնացում,
- է) առանձին օրինակների քննարկում,
- ը) պարբերության և մյուս պարբերությունների հետ նրա կապի ամբողջական ըմբռնում,
- թ) պարբերության բովանդակության և շարադրանքի մասին սեփական վերաբերմունքի (կարծիքի) արտահայտում,
- ժ) գլխավոր մտքի վերնագրի գրավոր նշում:

Ատենախոսության մեջ մանրամասն վերլուծված և ներկայացված է այս քայլերից յուրաքանչյուրի նշանակությունը ու կարևորությունը տեքստը հասկանալու գործում:

Կարևորված է նոր զույգում վերնագրերի օգնությամբ ընկերոջը նախորդ պարբերության կամ պարբերությունների վերապատմելու տեխնոլոգիական պահը: Ուշադրություն է հրավիրված այն հանգամանքի վրա, որ եթե մի դեպքում սովորողը ուսումնասիրում է պարբերությունը, հասկանում այն, որի արդյունքում հասկացածը վերափոխվում է «ներքին խոսքի» (որն էլ սովորողը ձևակերպում է որպես վերնագիր), ապա նոր զույգում պատմելու և վերապատմելու դեպքում, այդ «ներքին խոսքը» նա նորից վերաձևակերպում է որպես արտաքին խոսք, այսինքն՝ պատմում է պարբերությունն ըստ իր ընկալման:

Վերլուծությունների և փորձի հիման վրա հանգել ենք այն եզրակացության, որ Բիվինի մեթոդիկայով անձանոթ տեքստերն ըստ պարբերությունների փոփոխական կազմով զույգերով ուսումնասիրելու ժամանակ

յուրաքանչյուր սովորող հասկանում և յուրացնում է տեքստը հենց տեխնոլոգիայի հաշվին: Իսկ այս տեխնոլոգիով յուրացրած գիտելիքներն առավել կայուն և հիշողության մեջ երկար պահպանվող են: Այս տեխնոլոգիայով հաճախակի աշխատելու շնորհիվ զարգանում են նաև սովորողների կարողալ- հասկանալու և լսել-հասկանալու կարողությունները:

Երրորդ՝ **«Եմպիրիկ հետազոտությունների տարածքը և արդյունքները»** գլուխը բաղկացած է երկու ենթագլուխներից: Առաջին՝ «Եմպիրիկ հետազոտությունների տարածքը» ենթագլխում ներկայացված է, որ հեղինակի համար ուսումնասիրության բազա են հանդիսացել՝

- «Հայոց պատմություն» առարկայի դասավանդման ժամանակ իրականացված կոլեկտիվ ուսումնական պարապմունքները «Բյուրակն» կրթահամալիրի սովորողների և Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի առաջին կուրսերի ուսանողների հետ,
- «Մանկավարժական նախաձեռնություն հայկական ասոցիացիայի», Գևահատման և թեստավորման կենտրոնի, Կրթության ազգային ինստիտուտի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի, Հայաստանի սահմանադրական իրավապաշտպան կենտրոնի կողմից իրականացվող վերապատրաստման դասընթացների շրջանակում իրականացված կոլեկտիվ ուսումնական պարապմունքները:
- Զասախի N 2 դպրոցի փորձարարական դասարաններում, Երևանի N 118 հանրակրթական դպրոցներում իրականացված կոլեկտիվ ուսումնական պարապմունքները:

Բացի տեխնոլոգիաների գործնական կիրառումից հասկացմանը նպաստող տեխնոլոգիական տարրերը կիրառվել են նաև ատենախոսի հեղինակած դասագրքերում և ուսուցչի ձեռնարկներում: Դասագրքերի մեթոդական մասում ընդգրկվել են «Եկեք քննարկենք և բանավիճենք» («Հայոց եկեղեցու պատմություն-6»), «Քննարկում» («Հայոց եկեղեցու պատմություն-9»), «Քննարկման հարց» («Հայոց պատմություն-6» և «Հայոց պատմություն-8»), «Եկեք հասկանանք և բացատրենք», «Եկեք բացատրենք» «Հետևյալ հատվածի համար գտիր հարմար վերնագիր: Քո ընտրած վերնագիրը համեմատիր ընկերոջդ ընտրած վերնագրի հետ» («Հայոց եկեղեցու պատմություն-4-5» և «Հայոց եկեղեցու պատմություն-6-8», «Հայոց եկեղեցու պատմություն-10-11») առաջադրանքները:

Երկրորդ՝ «Սովորողների գործունեության արդյունքի գնահատումը հասկացման մակարդակով յուրացման տեսանկյունից» ենթագլխում ներկայացված են «Ռիվիսի մեթոդիկայով» և «Հասկացման բերող քարտերի մեթոդիկայով» աշխատանքի արդյունքների գնահատումն առանձնահատկությունները: Դրանք դրսևորվում են երկու տարբեր կողմերով: Առաջինն այն է, թե ինչպես կամ ինչ միջոցներով է պարզվում հասկացման խորությունն ու ինչ չափանիշներով է այն գնահատվում: Երկրորդը կոնկրետ վերաբերում է «Ռիվիսի մեթոդիկայով» և «Հասկացման բերող քարտերի մեթոդիկայով» աշխատելու ժամանակ գնահատման մեթոդներին:

Ներկայացված է, որ Նշված տեխնոլոգիաներով ուսումնական պարապմունքների ժամանակ ուսուցիչը սովորողների յուրացման աստիճանը կարող է ստուգել կամ պարզել՝

- ա) երբ որպես զույգ աշխատում է սովորողի հետ,
- բ) երբ լսում է, թե ինչպես են աշխատում սովորողները զույգով,
- գ) երբ լսում է փոքր ենթախմբերում սովորողների ելույթներն ու քննարկումները,
- դ) երբ ստուգում է սովորողի տեքստի ուսումնասիրության արդյունքում ձևակերպած վերնագրերը,
- ե) ամփոփիչ թեստային ստուգման միջոցով և այլն:

Աղյուսակով ներկայացված է «Բյուրակն» կրթահամալիրում «Դիվինի մեթոդիկա» և «Հասկացման բերող քարտերի մեթոդիկա» տեխնոլոգիաներով աշխատելու ժամանակ մշակված գնահատման չափանիշները, որոնցով պարզվել և գնահատվել է սովորողների հասկացման մակարդակը:

**Սովորողների կրթական ծրագրերի իրականացման մշտադիտարկման չափանիշները**

Գնահատվող ցուցանիշները	Չափանիշներ	Գնահատվող որակի մակարդակը	Միավերների հնարավոր քանակը	Ախտորոշման մեթոդները
Տեսական գիտելիքներ	Համապատասխանություն չափորոշչային և ծրագրային պահանջներին	1. Տեքստի ոչ բառացի վերարտադրություն	3-8	Հսկողություն, բանավոր հարցում,
		2. Հիմնավորվումների ներկայացում օրինակներով	5-9	Չրույց,
		3. Երևույթի բացատրություն, որը տրված չէ տեքստում	7-9	Թեստավորում,
		4. Նախադրյալների վերականգնում, որոնց հիման վրա կատարվել են դատողության մեջ պարունակող եզրակացությունները	9-10	Ստուգողական հարցում

Աղյուսակ 1

Գնահատումներն իրականացվել են երկու տարատարիք ուսումնական խմբերում: Առաջին խմբի մեջ ընդգրկված են եղել 6-9-րդ դասարանների 32 աշակերտներ, իսկ երկրորդ խմբում՝ 10-12-րդ դասարանների 25 աշակերտներ:

Գնահատման արդյունքները ներկայացվել են գծապատկերներով և աղյուսակներով:

**Առաջին խմբի համեմատական առաջընթացը**

Որակի մակարդակները	Սովորողների տոկոսը տարվա սկզբին	Սովորողների տոկոսը տարվա կեսին	Սովորողների տոկոսը տարվա վերջին
առաջին	69	47	19
երկրորդ	16	25	31
երրորդ	9	16	28
չորրորդ	6	12	22

Աղյուսակ 2

**Երկրորդ խմբի համեմատական առաջընթացը**

Որակի մակարդակները	Սովորողների տոկոսը տարվա սկզբին	Սովորողների տոկոսը տարվա կեսին	Սովորողների տոկոսը տարվա վերջին
առաջին	36	16	12
երկրորդ	28	24	20
երրորդ	20	32	32
չորրորդ	16	28	36

Աղյուսակ 3

Գծապատկերներով ու աղյուսակներով պարզորոշ ցույց է տրված, որ «Բիվինի մեթոդիկայով» և «Հասկացման բերող քարտերի մեթոդիկայով» աշխատելու արդյունքում, հասկանալու մակարդակների տեսանկյունից էական բարձրանում է սովորողների յուրացման աստիճանը:

Ուսուցման որակին և մանկավարժական տեխնոլոգիաներին նվիրված մանկավարժագիտական գրականության ուսումնասիրության միջոցով խնդրի մշակվածության աստիճանն ու մեթոդաբանական հիմքերը պարզելու շնորհիվ, ինչպես նաև դասավանդվող նյութի յուրացման որակի վրա մանկավարժական տեխնոլոգիաների ու տեխնոլոգիական գործոնների ազդեցությունը վեր հանելուց հետո արվել են հետևյալ **եզրակացությունները**.

1. Հանրակրթական ուսումնական գործընթացը պետք է անվանել որակյալ, եթե ուսումնական նյութը յուրացվում է յուրաքանչյուր սովորողի կողմից:
2. Ուսումնասիրվող նյութը պետք է համարել յուրացված, եթե այն յուրաքանչյուր սովորողի կողմից յուրացվում է առնվազն հասկանալու մակարդակով:

3. Ուսումնական գործընթացում հասկացման մակարդակով յուրաքանչյուր սովորողի համար յուրացումն ապահովելու խնդրում վճռորոշ տեխնոլոգիական գործոնն է:
4. Հասկացման մակարդակով յուրաքանչյուր սովորողի համար յուրացումն ապահովելու խնդիրը հնարավոր է լուծել, եթե ուսուցումը կազմակերպվի այնպիսի մանկավարժական տեխնոլոգիաների միջոցով, որոնք իրականացվում են ընդհանուր ճակատի բացակայության սկզբունքով, ինչպիսիք են, օրինակ, «Րիվինի մեթոդիկան» և «Հասկացման բերող քարտերի մեթոդիկան»:
5. «Րիվինի մեթոդիկա» և «Հասկացման բերող քարտերի մեթոդիկա» տեխնոլոգիաները և համանման այլ տեխնոլոգիաները նպատակաուղղված լինելով ուսումնասիրվող նյութի հասկանալով յուրացմանը՝ միաժամանակ նպաստում են նաև այնպիսի վերառարկալըական կարողությունների ձևավորմանը, ինչպիսին է հասկանալու մեթոդներին և տեխնիկային տիրապետելը:

**Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հետևյալ հրապարակումներում.**

1. Պարսամյան Վ., «Ուսուցման որակի բարձրացման որոշ հարցեր, ուսուցման որակի բարձրացման ուղիները», Գիտագործնական կոնֆերանսի նյութեր, Երևան 2001, 51, էջ 6-10:
2. Պարսամյան Վ., Տակտային մեթոդիկան, Մանկավարժական գիտամեթոդական հանդես «Քաղաքացիական կրթությունը դպրոցում», Երևան, Էդիթ պրինտ, 2001թ., N1, էջ 54-58
3. Պարսամյան Վ., «Հասկացման բերող քարտերի մեթոդիկան» Մանկավարժական գիտամեթոդական հանդես «Քաղաքացիական կրթությունը դպրոցում», Երևան, Էդիթ պրինտ, 2002թ. N3, էջ 43-50:
4. Պարսամյան Վ. «Աշխատանք փոքր ենթախմբերով», «Րիվինի մեթոդիկան», «Տակտային մեթոդիկան», «Րիվինի հակադարձ մեթոդիկան», «Րիվինի մեթոդիկայի կիրառումը «Մարդու իրավունքներ» ուսումնական առարկայի դասընթացում», «Տակտային մեթոդիկայի կիրառումը «Մարդու իրավունքներ» ուսումնական առարկայի դասընթացում», «Րիվինի հակադարձ մեթոդիկայի կիրառումը «Մարդու իրավունքներ» ուսումնական առարկայի դասընթացում», Մարդու իրավունքներ, ձեռնարկ 8-րդ դասարանի ուսուցիչների համար, Երևան 2005, 104, էջ 81-94:
5. Պարսամյան Վ. և ուրիշներ, Հայոց եկեղեցու պատմություն, դասագիրք հանրակրթական դպրոցի 4-րդ դասարանի համար, Երևան 2003, 96 էջ:
6. Պարսամյան Վ. և ուրիշներ, Հայոց եկեղեցու պատմություն, դասագիրք հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի համար, Երևան 2004, 128 էջ:
7. Պարսամյան Վ. և ուրիշներ, Հայոց եկեղեցու պատմություն, դասագիրք հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի համար, Երևան 2005, 139 էջ:

8. Պարսամյան Վ. և ուրիշներ, Հայոց եկեղեցու պատմություն, ուսուցչի ձեռնարկ 4-5, Երևան 2003, 152 էջ:
9. Պարսամյան Վ. և ուրիշներ, Հայոց եկեղեցու պատմություն, ուսուցչի ձեռնարկ 6-8, Երևան 2003, 180 էջ:
10. Պարսամյան Վ. և ուրիշներ, Հայոց եկեղեցու պատմություն, ուսուցչի ձեռնարկ 9-10, Երևան 2003, 208 էջ:
11. Պարսամյան Վ. և ուրիշներ, Հայոց պատմություն, դասագիրք հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի համար, Երևան 2003, 176 էջ: Վերահրատարակվել է 2007, 2013 թ.
12. Պարսամյան Վ. և ուրիշներ, Հայոց պատմություն, դասագիրք հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի համար, Երևան 2004, 192 էջ: Վերահրատարակվել է 2008, 2014 թ.:
13. Պարսամյան Վ., «Հասկացման մանկավարժությանն անցնելու անհրաժեշտությունը» Մանկավարժություն 2010թ. № 8 էջ 23-27:
14. Парсамян В., «О необходимости перехода к педагогике понимания» , Избранные труды международной конференции, 26-30 сентября, Ереван 2012, с. 306-308
15. Պարսամյան Վ., «Յուրաքանչյուր երեխայի որոնյալ կրթության ապահովման հիմնահարցերը» Մանկավարժություն 2014թ. № 6 էջ 20-28:
16. Պարսամյան Վ. և ուրիշներ, Հայոց եկեղեցու պատմություն, դասագիրք հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի համար, Երևան 2008, 96 էջ: Վերահրատարակվել է 2014 թ.:
17. Պարսամյան Վ. և ուրիշներ, Հայոց եկեղեցու պատմություն, դասագիրք հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի համար, Երևան 2013, 112 էջ:
18. Պարսամյան Վ. և ուրիշներ, Հայոց եկեղեցու պատմություն, դասագիրք հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի համար, Երևան 2013, 128 էջ:
19. Պարսամյան Վ. և ուրիշներ, Հայոց եկեղեցու պատմություն, Ուսուցչի ձեռնարկ 5-6, Երևան 2014, 190 էջ:
20. Պարսամյան Վ. և ուրիշներ, Հայոց եկեղեցու պատմություն, ուսուցչի ձեռնարկ 4-5, Երևան 2013, 160 էջ:
21. Պարսամյան Վ. և ուրիշներ, Հայոց եկեղեցու պատմություն, ուսուցչի ձեռնարկ 4-5, Երևան 2013, 160 էջ:
22. Պարսամյան Վ., «Հասկացման բերող քարտերի մեթոդիկայի հասկացումը ապահովող տեխնոլոգիական առանձնահատկությունները» Մանկավարժություն 2015թ. № 6 էջ 40-46:
23. Պարսամյան Վ. «Հասկացման գործընթացները Ռիվիի մեթոդիկայում» Труды Международной научной конференции “Образование, наука и экономика в вузах и школах. Интеграция в международное образовательное пространство” г. Горис, Армения, 28 сентября – 2 октября 2015 г. с. 177-183.

## ПАРСАМЯН ВАРДАН РАЗМИКОВИЧ

### ТЕХНОЛОГИЧЕСКИЕ ФАКТОРЫ В ПРОЦЕССЕ КАЧЕСТВЕННОГО ОБУЧЕНИЯ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01 – «Теория и история педагогики».

Защита диссертации состоится 31 мая 2017 г. в 12:00 часов на заседании специализированного совета 020 «Педагогика» ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, по адресу: 0010, г. Ереван, ул. Тиграна Меца, 17.

#### РЕЗЮМЕ

Задача улучшения качества стала ключевой идеей философии образования. Требование качества обучения и эффективности средств достижения этого особенно остро стоит по причине развития общества, новых жизненных реалий и неспособности быстрой адаптации системы образования к этим изменениям. Сейчас, в называемом информационным веке, с огромной скоростью увеличивается объем необходимой для деятельности человека информации, запомнить которую просто невозможно. Поэтому учащиеся параллельно увеличению объема необходимого для усвоения материала часто не усваивают, а просто запоминают предназначенный для усвоения материал. Низкий уровень коммуникативных умений в свою очередь непосредственно влияет на качество понимания и усвоения учебного материала. Для повышения качества образования сегодня первоочередной задачей должен стать вопрос обязательного усвоения каждым учащимся изучаемого материала на уровне понимания.

**Целью исследования** является выявление и обоснование решающего значения эффективных технологических факторов с точки зрения обеспечения качественного обучения каждого члена учебной группы на примере "методики доводящих карточек" и "методики Ривина".

В соответствии с целью, объектом, предметом и гипотезой были поставлены **задачи исследования**:

1. изучения педагогической научно-исследовательской литературы
2. с помощью исследования и опытов определить влияние образовательных технологий и технологических факторов на качество усвоения учебного материала,
3. проанализировать и обосновать роль "Методики доводящих карт" и "Методики Ривина" с позиции обеспечения качественного усвоения каждым учащимся.

**Научная новизна исследования:**

- определено понятие "качественное обучение", уточнены и конкретизированы понятия "понимание", "технология обучения", "методика обучения",
- на примере "методики доводящих карточек" и "методики Ривина", основанных на форме коммуникации с переменным составом, дано обоснование решающего значения технологического фактора в качественном учебном процессе, в частности в вопросе усвоения изучаемого материала на уровне понимания.

#### **Теоретическая значимость исследования:**

В результате исследований:

- уточнены и конкретизированы смысл и значение понятий "качественное обучение", "технология обучения", "методика обучения",
- проанализированы две учебные технологии, обеспечивающие усвоение на уровне понимания, и обоснованы те механизмы и факторы, которые обеспечивают процесс понимания.
- Результаты исследования могут представлять теоретический интерес для интересующихся данной темой специалистов.

#### **Практическая значимость исследования**

- Анализ "Методики доводящих карт" и "Методики Ривина" позволит более целенаправленно использовать их в обновленном учебном процессе.
- Результаты исследования могут быть использованы педагогами, преподающими не только в общеобразовательных школах, но и в средних профессиональных учебных заведениях и университетах, для организации эффективного учебного процесса, с учетом индивидуальных особенностей учащихся.

**Диссертация состоит** из введения, трех глав, заключения, списка использованной литературы. Общий объем диссертации составляет 145 компьютерных страниц, содержит 6 таблиц, 8 диаграмм, 2 схемы.

## **Parsamyan Vardan Razmik**

### **Technological Factors in Qualified Learning Process**

Thesis for the degree of Candidate of Pedagogical Sciences (speciality 13.00.01- «Theory and History of Pedagogy»).

The defence of the thesis will be held at 12<sup>00</sup> on may 31, 2017 at the session of the Special Board 020 «Pedagogy» HAC (Higher Attestation Commission) to award scientific degrees at Kh. Abovyan Armenian State Pedagogical University.

Address: 0010, Yerevan, Tigran Mets ave.,17

### **SUMMARY**

**The relevance of the research:** The idea of quality assurance became a key issue in improving the quality of education philosophy. The demand for quality education, especially a highly effective means of achieving it is observed because of the inability to adapt the rapid development of society, new conditions and changes in the educational system. At present, in the so-called informational era, the necessary informational volume for people increases rapidly which simply is impossible to remember.

Thus, in parallel with the growth in volumes of material students often don't master, but just keep them in mind.

Low capacity of mental-communication directly affects on the understanding of the teaching material and mastering it.

Today it should be a priority to raise the mandatory requirement of understanding the studied material appropriately by every student for improving teaching quality.

**The aim of the research:** Is to identify and justify decisive factors of efficient technologies for each member of the study group by using examples of "Gaining understanding cards" and "Rivins methodology".

#### **The objectives of the research are:**

- to determine the level of preparedness of the issue and methodological bases by studying pedagogical scientific literature on the quality of education and educational technology,
- to identify the impact of educational technology and technological factors on mastering the quality of the teaching material through research and testing,

- to analyze and justify the role of “Gaining understanding cards’ methodology” and “Rivins methodology” from the point of view of each learner.

### **Scientific innovation of the research**

- “Qualified education” concept is defined, “understanding”, “training technology”, “training methodology” concepts are grounded and clarified
- A decisive technological factor on training process is proved on the examples of “Gaining understanding card” and “Rivins” methodology by variable composition form of communication.

### **Theoretical value of the research**

On the result of studies and experiments

- the meaning and importance of qualified education, educational technology, learning methodology concepts are grounded and clarified.
- two learning technologies providing mastering on the understanding level are analyzed. Mechanisms and factors which provide the understanding of these technologies are grounded.
- the analyzes and validated procedure can present theoretical interest for the specialists interested in this subject.

### **Practical significance of the research**

- The analyzes of “Gaining understanding card”and “Rivins methodology” will give possibility to have an intended use in new learning process.
- They can be used by the pedagogies training not only in public schools, but also in initial craftsmanship , mid-level educational institutions and institutes for organizaing productive educational process taking into account students' individual characteristics.

The structure and volume of the thesis: Dissertation consists of Introduction, three Chapters, Conclusion, Bibliography. The general volume of dissertation is 145 computer pages including 6 tables, 8 diagrams, 2 schemes.

